մէջ բնակուող և Մեզ հպատակ հայերը՝ որ Մեր հաճութիւնն և թեարկութիւնն ընդ միշտ նրանցից անկապտելի կըմնան»։

Բացի այդ՝ նոյն թուականի նոյեմբեր ամսին բարձրագոյն հրովարտակ գրուեցաւ Կ. Գոլսի ռուսաց դեսպանին, թէ «Պատուիրում ենք Ձեզ ամեն հնար եղած նպաստ ու պաշտպանութիւն հասցնել հայոց Հայրապետի (Յովսէփի) կողմից Թիւրքիայի մայրաքաղաքն առաքուող հոգևոր պաշտօնեաներին այն ամեն պարագաներում, ուր նրանք կարիք կունենան, և ըստ ամենայնի նոյն հրովարտակի (11 յունվ. 1781 ամի) համեմատ վարուիլ»։

Ապա թէ վրաց Գէորգ թագաւորին գրուեցաւ. «Առաջարկում ենք Ձերդ Բարձրութեան՝ հայրապետի Ձեր երկիրը ժամանելուն պէս՝ Ձեզ յայտնի հին եղանակով և հանդիսով ընդունել նրան և այդ տեղից իւր սրբազան կոչման վայել շուք ու պատուով և թիկնապահ զինուորներով ճանապարհ դնել։ Լիայոյս ենք, որ Ձերդ Բարձրութիւնը առաւել մեծ փութով կաշխատի այդ մասին, որովհետև Հայրապետը, Մեր կայսրութեան մէջ արքեպիսկոպոս լինելուց յետոյ, Մեր ձեռքով է հաստատուած իւր այդ նոր աստիճանում»։

Յովսէփ կաթողիկոսն էլ իւր կողմից՝ յառաջ քան Ռուսաստանից մեկնելը մի թուղթ ուղղեց ռուսաց կառավարութեան, որով միջնորդում էր՝ «ի տրիտուր իւր ծառայութեանց, որ մատուցել է ռուսաց պետութեան, ի յարգանս հայրապետի վսեմ կոչման և ի նշան ամենողորմած բարեհաճութեան դէպի հայ ազգը» հոգ տանել իւր հօտի պէտքերի մասին և վարձատրել իւր մերձաւոր աշխատակիցներին. միևնոյն ժամանակ մատնացոյց լինում Գրիգոր վարդապետի վերայ, որպէս իւր յաջորդի, որին մտադիր էր եպիսկոպոս ձեռնադրել։ Խնդրուած կէտերից շատերը կատարուեցան և բացի այդ՝ «ի յարգանս», առուած է հրովարտակում, «հայրապետի ծառայութեանց յօգուտ մեր Կայսրութեան» այն ռոճիկը, որ նա ստանում էր իբրև Ռուսաստանի վիճակաւոր առաջնորդ, մշտական խոշակի վերածուեցաւ և նրան 25 արշին զգեստացու դիպակ ընծայեցին։ Բոստոպչին կոմսն այդ մասին զեկուցում տալով Հայրապետին գրում էր. «Նորին Կայսերական Մեծութիւնը բարեսիրաբար հաճեցաւ այս չնորհումներով օրոշել Ձեզ միւս հայրապետներից, Ձեր նախորդներից... Հաղորդում եմ Ձեզ, որ Ձեր այս

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան